

Վարդ Սեղբ-ի
Էր. 713

Խորենացի
Գ. 29

Յե՛ս քարեքայսացոյն ձեր Յե՛ս քարեքայսացոյն Վա-
պահեալմա՛ր Սարմա- ղե՛սի պահեալմա՛ր Գթայն
ցւոցն դարձի յաղթութեամբ դարձի

Ծայրայեղ պահպանողականները թերեւ ա-
ռաքեն, որ Չորոփորեցին կարող էր աչքի առաջ
ունենալ միանգամայն և՛ յոյն բնագիրը և՛ Խորե-
նացուն։ Եւ ենթադրենք առ ըստէ՛, թէ Խորե-
նացին յերաւել՝ վերեւում առաջ բերուած հա-
տուածք ուղղակի յոյն բնագրից է թարգմանել,
իսկ Չորոփորեցին՝ ծանօթ լինելով Խորենացուն
և նրա այդ մի կտոր փոխառութեանը Սեղբե-
տրոսի յոյն բնագրից՝ հէնց այդ պարբերութիւնը
թարգմանելիս օգտուեց Խորենացու արդէն պատ-
րաստ ընտրագրութեամբ։ Այս, թէև շատ քաշ-
քշուի, բայց ոչ բոլորովին անհնարին ենթադրու-
թիւնն էլ անհիմն է դուրս գալիս, երբ ուշք ենք
դարձնում այն մանր տարբերութիւններին, որ
կան երկու հեղինակների մէջ։ Չորոփորեցին ա-
սում է՝ «քառեվայելացեալ քան զքառու վիճակաւորս»,
իսկ Խորենացին՝ «գերազանցեալ քան զամենայն», որք
զայնու ժամանակաւ էին առաքելիք։ Չորոփորե-
ցին թարգմանում է՝ «առ ի նորա վարս տեղի գտա-
նել ոչ ուրեմ կարացին», Խորենացին կոկում է՝ «ի
նորա վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին»։ Չո-
րոփորեցին գրում է՝ «բարեակամ, բանիւ տըա-
մապայծառացեալ, գործով սուրբ, յուսով համ-
բերողական» ևւն, իսկ Խորենացին աւելի ողորկ՝
«լաւակամ, բանիւք պայծառ, գործովք ժուժկալ,
յուսով համբերող»։ Ինչո՞ւ համար Չորոփորեցին
պետի գրէր տրամապայծառացեալ և ոչ պայծառ, եթէ
Խորենացուն էր արտագրում և ոչ թէ յունա-
րէնից ստեղծէր և բառացի թարգմանում։ Ու-
րեմն և այս դէպքումն էլ կարող ենք պնդել ա-
ռանց տարակուսանաց, որ Խորենացին է բանա-
քաղը և ոչ Չորոփորեցին։

Այսպէս ուրեմն, մեր կարծիքով, լուծւում
է՝ և այն վերջնականապէս՝ Խորենացու Հայոց
Պատմութեան գրութեան ժամանակի, ուրեմն և
վաւերականութեան խնդիրը։ 678 րոյից առաջ Խո-
րենացու Հայոց Պատմութիւնը վար։

Գալ անգամ կաշխատինք, եթէ հնարաւոր
է, աւելի մօտենալ Հայոց Պատմութեան գրու-
թեան բուն ժամանակին *։

Գալուստ Տէր Մկրտչեան

22 Հոկտեմբերի
1897

Մեր երկու ԳԵՐԿԱՆ ԼԵՂՈՒՄ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԳԻՐԸ.

— 246 —

Միկենայի Հանդէս Ամսօրեայի այս տա-
րուայ սեպտեմբերի համարի մէջ Ծաղկաքաղ սո-
րազրութիւն կրող յօդուածգիրը, որը, ինչպէս
երևում է, խմբագրութեան և նոյն իսկ Վիկենայի
Միկենայի Խմբագրութեան բերանն է, մի քանի նկատու-
թիւն էր արած մեր երկու գրական միութեան մա-
սին. թոյլ տուէք, խնդրեմ, Արարատի մէջ զետե-
ղել մեր մի քանի կարծիքն այդ խնդրի նկատմամբ,
որի մասին մինչև այժմ գծախառնար բազմակող-
մանի քննադատութիւն և ուսումնասիրութիւն ե-
ղած չէ։ Մենք յաւակնութիւն չունինք, անշուշտ,
այդպիսին ընծայելու ընթերցողին, բայց կարծու-
ենք, խնդիրը պարզելու համար աւելորդ չի լինի
յայտնել, ինչ որ այդ մասին մտածում ենք։

Մենք համաձայն չենք յարգելի Ծաղկաքաղի
միջոցով Հանդէս Ամսօրեայի յայտնած մի քանի
գաղափարներին, ամենից առաջ այն գաղափարին թէ
«առ այժմ մեզի արեւելեան և արևմտեան լեզուե-
րու միութիւնն անհրաժեշտ հարկաւոր չէ»։ Գուցէ
Հանդէսի ուրիշ համարների մէջ պատճառաբա-
նուած է այդ տարօրինակ կարծիքը, բայց Ծաղկա-
քաղն այստեղ ոչ մի պատճառ չէ բերում թէ ին-
չո՞ւ լեզուների միութիւնն առ այժմ անհրաժեշտ
կարեւոր չէ համարում, զի անշուշտ պատճառ կա-
րելի չէ համարել այն թէ առ այժմ «մեզի կարեւոր
է հայերէնի ուսումնասիրութիւն, հայերէն քննադա-
տական յօդուածներ, ընդհանուր զարգացում՝ գիտու-
թեան մէջ. և ասոնց քով երկրորդական խնդիր կը
մնայ լեզուին այս կամ այն ձևին դէմ ի դուր բո-
ղոքելը, բանակոխ մղելը» և այլն։

Արդարեւ, լեզուի այս կամ այն ձևի դէմ բո-
ղոքելը երկրորդական է վերոյիշեալների դիմաց,
բայց մենք երկու գրական լեզուների միութեան
ծանրակշիռ խնդիրն այդպիսի բողոք կամ բանակոխ
չենք համարում, եթէ գիտութիւն ձեռք բերելը,
ընդհանուր զարգացումը ևւն անհրաժեշտ են, մի-
թէ լեզուի միութիւնն այդ պատճառով պէտք չէ
կարեւոր համարել, Կարծում ենք, եթէ մէկը կա-
րեւոր է, միւսն ևս կարեւոր, իւրաքանչիւրն իր
չափով, Կարելի չէ ասել թէ մեզ գիտութիւն է

այլափոխուած և՛ այսպիսի. «Եւ գերազանցեալ եւ վայել-
չացեալ այլն անալիտիկ ժամանակաւորս եկեղեցոյն չը-
նդունայ, վերագոյն ըստ արդարութեան անհարմարին յա-
ռաքանայ յամենայնի պիկի հուստով եւ վարովն եւս
պիկացոյն, քառեխորհ, ողբախոհ, սուրբ, մեկնեալ յամե-
նայն իրաց յարաց, ինք քարոյս եւ խմբաւոր արհիւ, եր-
կայնաւոր եւ մարդասեր, անհատ միջոցեցոյն, հեշտակա-
կան դիմի, հեշտակական եւս շարժման եւ քարքառով,
եւ յամենայնի գարեցոյն ունի գնմանութիւն, որոց աշա-
կերեալն եր ի Քրիստոս Յիսուս» Փոքր-Սոկ. եր. 699։

* Այս յօդուածում մեզ հետաքրքրող փոխառուած
հաստատութիւն Սոկրատեսական անձնականի դառնալու լատի

Հարկաւոր, ագոր վրայ միայն մտածենք, իսկ լեզուի միութեան դործը թողնենք ապագային: Այն պէտք է անել և այս չլծողները:

Լեզուի միութիւնը մեզ համար նոյնքան կարևոր է, որքան հայ գրականութեան զարգացումը: Ո՞վ կարող է ասել թէ հայ ժողովրդի իբրև հայ զարգացումը կապուած է հայերէն գրականութեան զարգացման հետ, թէ մեզ համար անհրաժեշտ հարկաւոր է մեր գրականութեան զարգացումը և կամ թէ մեզ պէտք է չին հայերէն շատ ինքնուրոյն գրքեր ու շատ թարգմանութիւններ: Բայց գիրքը որ կայ՝ ընթերցողի համար է: Որքան և շատեան հայերէն գրքերը, եթէ կարգացող չունին, ոչինչ է անոնց նշանակութիւնը. իսկ ընդհակառակն՝ որքան մեծ և ընդարձակ լինի կարդացողների շրջանը, այնքան և աւելի մեծ կը լինի գրի և գրականութեան ազդեցութիւնը: Մաշուած ճշմարտութիւն է այս: Բայց հէնց այդ մաշուած ճշմարտութեան վրայ է հիմնուում՝ մեր գրական լեզուների միութեան անհրաժեշտութիւնը: Բացատրենք մեր խօսքը: մեզ ծանօթ արևելեան հայերից օրինակներ բերելով.

Տարիներ առաջ մի մեծ աւանի մէջ ընթերցող երիտասարդները հետաքրքրութեամբ կարդում էին Էօթեն Սիւի «Թափառական Հրէան»: Այդպէս է միշտ, ինչ որ Եւրոպայում հնացած է, մեզնում նորութիւն է: Այդ վէպի մի հատորը, ինչպէս յայտնի է, նախանդեանը թարգմանած է արևելեան լեզուով: իսկ նրա լեզուն այժմ մասամբ հնացած է: Կայ նոյն գրուածքի և արևմտեան լեզուով ամբողջական թարգմանութիւնը, եթէ չենք սխալուում: Զմիւռնիայում տպագրուած: Արդ մեզ պատահեց ծանօթանալ վերոյիշեալ աւանում մի ընթերցողի հետ: որ նախանդեանի թարգմանած առաջին հատորը կարգացել էր և յափշտակուած էր այդ գրուածքով: Նա հետաքրքրուելով ցանկանում էր շարունակել: վէպն ամբողջ կարդալ. ագոր համար նա ձեռք էր բերել արևմտեան լեզուով թարգմանած երկրորդ հատորը: Բայց առաջին թերթերը կարդալուց յետոյ՝ թողել էր և քանի անգամ փորձել էր շարունակել: Բայց միշտ էլ ձանձրանալով մէկդի էր գրել: Կը գտնուին թերևս ասողներ թէ շատ լաւ էլ արել էր: որ չէր կարդացել: Բայց խնդիրն այդ չէ: այլ այն թէ ինչու այդ երիտասարդը առաջին հատորով հետաքրքրուած էր և, իրեն ասելով, երկու օրում էր կարդացել: իսկ երկրորդ և միւս հատորների ընթերցանութիւնը նրա համար անհնար էր դառնում: — Պատճառը շատ հասկանալի է: միայն վէպի լեզուն էր: Ասել չի ուզի: եթէ մէկը բաւական կրթուած է, մի որոշ չափով վարժուելուց յետոյ հեշտութեամբ կը հասկանայ և միւս գրական լեզուն: Բայց ո՞վ կարող է ասել թէ մեր ընթերցողներն այդքան վարժութիւն ունին և այնքան բնաւորութիւն ունին:

որ կարողանան ամիսների աշխատանք գործ դնել լեզուական գիտարութիւններին յաղթելու համար: Գիտնական կամ ուսեալ ընթերցողի համար արդարև լեզուն երկրորդական տեղ է բռնում. նա շատ անգամ կարող է և օտար լեզուներով կարդալ մի բան: Բայց մեր ընթերցողների քանիսը գիտնական կամ ուսեալ են: Մեր ուսեալները, որոնք մեծ մասամբ ուսաց գիմնադիմներն ու համալսարաններ են աւարտած, դժբախտաբար, ամենայն սիրով միևնոյն գրուածքի ուսերէն թարգմանութիւնն են կարդում: քան նոյն իսկ արևելեան հայերէնը, քանի որ նրանք ուսերէնն աւելի լաւ են հասկանում: իսկ հայերէն ընթերցանութեամբ պարագողների մեծ մասի, եթէ ոչ ամենքի, լեզուական պատրաստութիւնը ևս վերը յիշած ընթերցողի պատրաստութիւնից աւելի չէ:

Թիֆլիսի Հրատարակչական ընկերութիւնը առանձին ուշադրութիւն է դարձնում մանկական ընթերցանութեան համար գրքոյկներ տպագրելու: որքան կարելի է կոկիկ և հեշտ լեզուով, թէև շատ անգամ անյաջող, և միթէ մէկը կարող է լինել, որ այդ մանկական ընթերցանութեան համար որոշուած գրքերը կորած չհամարի արևմտեան հայ մանուկների համար: — «Մայրենի լեզուի» մի դասագիրք էր շինած պ. Տ. Ղևոնդեան, յօդուածները մեծ մասամբ ուսերէնից թարգմանած: այդ դասագիրքը, որքան գիտնէք, Կ. Պոլսոյ Ուսումնական խորհուրդը ընդունած է և Թիւրքիայի հայ դպրոցների համար, Բայց անշուշտ Տ. Ղևոնդեանի թարգմանութիւնը արևելեան լեզուից արևմտեան լեզուին թարգմանելով, նոյնը եկած է: եթէ չենք սխալուում, և Տ. Սահակ քահանայի Սրբազան պատմութեան դասագրքի գլուխը:

Թիֆլիսի Յովնանեան օրիորդաց դպրոցի և, բաժանմունքի աշակերտուհիները մի ժամանակ, երբ արևմտեան բարբառով տպագրուած որևէ գիրք էր տրուում իրենց կարգալու, չէին ընդունում: պատճառ բերելով «գրաբար» լեզուն, թէպէտ և նրանք գրաբարի դասեր ունէին և աշխարհաբարի դասի միջոցին հայերէնի ուսուցիչն աշխատում էր նրանց ծանօթացնել արևմտեան բարբառին այդ լեզուից յօդուածներ կարդալով և քերականական տարրերութիւնները բացատրելով: Իսկ միթէ Կովկասում մեր ընթերցող հայ կանայք ընդհանրապէս աւելի լեզուական վարժութիւն ունին քան այդ դպրոցի սանուհիները: մեր կանայքը հազիւ թէ արևելեան գրական լեզուին են վարժուում: արևմտեան գրական լեզուն նրանց համար բնաւին կորած է: Երկու գրական լեզու ունենալը ոչ միայն մեր կանանց համար շուայութիւն է, այլ և բոլոր ուսաց դպրոցներն աւարտողների համար: Բացառութիւն ամեն բանի մէջ կայ անշուշտ:

Մենք կարող ենք օրինակները բազմապատկել:

որքան ուզենք. բայց արդէն կարծում ենք թէ խնդիրը հասկանալի է. Արեւմտեան լեզուով տպագրուած գրքերի մեծ մասն ապարդիւն կորչում է արեւելեան հայերի համար. իսկ արեւելեան լեզուով գրքերի մեծ մասն արեւմտեան հայերի մեծ մասի համար. Աւրեմն ի՞նչ է լինում երկու գրական լեզու ունենալու հետեանքը:—այն որ մեր գրականութեան գրեթէ կէսը մեռած է մնում. ընթերցողների կէսի համար. իսկ գիրքը մեռած մնալու համար չէ. այլ կարդալու համար. Այս մտքով առած մեր գրականութիւնը շատ չէ զարգանում և սպասած օգուտը չէ տալի. Ճշմարիտ է. ընդարձակ մտքով առած՝ հայերէն գրականութեան մէջ են և գրաբար և միջնադարեան լեզուով և արեւելեան ու արեւմտեան գրական լեզուներով և նոյն իսկ բարբառներով գրուածները. բայց այդ ամենը կենդանի գրականութիւն է միայն մասնագէտի և ուսումնականի համար. իսկ ընթերցողների մեծ մասի համար գրաբար միջնադարեան կամ արեւմտեան լեզուով (հարկաւ արեւելեան լեզուն իմացող ընթերցողի համար) գրուածները գոյութիւն չունին. Պարելի չէ ամեն մարդուց պահանջել. որ հայերէն լեզուի բոլոր գրական ձևերը հասկանայ. Վիեննայի գերմանացին գիտէ իւր Վիեննայի բարբառը ու գրական գերմաներէնը. այդպէս և բերլինցին կամ միւնխենցին. իսկ երևանցի հայը պէտք է իւր բարբառի և արեւելեան գրական լեզուի հետ նաև արեւմտեան գրական լեզուն սովորէ. իսկ արեւմտեան լեզուն հասկանալու պէտք է նաև գրաբար քերականութիւն իմանալ. Բայց նա այդ չէ կարող անել. ուստի և Մամուրեանի ընդհանուր պատմութիւնը. և Մէնէլէշեանի բնական պատմութիւնը և հարիւրաւոր այդպիսի գրքեր նրա համար մեռած են. թէպէտև այդ գրքերի և այդպիսիների կարիքը ևս շատ զգայ.

Աւրեմն պարզ է եղբակացութիւնը. եթէ չենք կամենում. որ մեր գրականութիւնը մասամբ մեռած մնայ. պէտք է մի գրական լեզու ունենանք. Աւրեմն ոչ միայն կարևոր. այլ և անհրաժեշտ կարևոր է մեր լեզուների միութեան խնդիրը. և որքան շուտ լինի այդ միութիւնը. այնքան աւելի լաւ. մեր ընդհանուր զարգացման և յառաջագիւտութեան համար.

Բայց այդ խնդիրը կարելի է և ուրիշ տեսակէտներով ըմբռնել.

Եթէ մի վիճակագրական տեղեկագիր կազմուի՝ իմանալու համար թէ արեւմտեան լեզուով տպագրուած գրքերը որքան թուով ծախուած են Վոլկասում. բացայայտ կը տեսնենք. որ այդպիսի գրքերի թիւն անշան չնչին է. Վաճառուած գրքերի մեծագոյն մասն ևս այնպիսի գրքեր են. ինչպէս Տ. Չարբալեանի Հայոց դպրութեան պատմութիւնը և նմանները. որոնց գնողներն ու կար-

գացողները լեզուական այնքան պատրաստութիւն ունին. որ ոչ միայն արեւմտեան գրական լեզուն. այլ և գրաբարը հասկանում են. իսկ սովորական ընթերցողների համար որոշուած գրքերից. կարելի է ասել. գրեթէ բոլորն չի ծախուած արեւելեան հայոց մէջ. Այդպէս և արեւելեան * լեզուով գրքերը չեն ծախուում արեւմտեան հայոց մէջ. Բայց տեսէք թէ ինչ է լինում ազոր հետեանքը. Յաճախ պատահում է. որ մի և նոյն գիրքը թարգմանուած է երկու գրական լեզուով ևս. Ի՞նչ ասել կուզէ. որ գերմանացոց կամ ֆրանսիացոց նման մեծ ազգերի մէջ. քանի որ գրքերը հարկւր հազարներով են վաճառուած և թարգմանիչները հատկաներով չեն. ինչպէս մեզնում. մի և նոյն գրքի մի քանի մէկը միւսից յաջող թարգմանութիւնները ցանկալի են. Բայց մենք նրանց չափով չափուել չենք կարող. մեր փոքրիկ ազգի համար. որի մէջ գրի և գրականութեան ճաշակն ու սերը դեռ նոր է ըսկսուած. մի և նոյն գրքի երկու թարգմանութիւն ունենալը վնասակար չապշուութիւն է. Վնասակար ենք ասում. քանի որ այդտեղ մտաւոր աշխատանքի դուր վառնումն է լինում. թարգմանիչը կարող էր. փոխանակ արդէն թարգմանուածը նորից թարգմանելու. մի ուրիշ նոր գիրք թարգմանել. Եւ չենք խօսում նիւթականի վնասի մասին. թէ որքան ապարդիւն ծախք է լինում տպագրելու համար երկու թարգմանութիւնները. որոնք երկուսն էլ զընդունելի են սպասում. իսկ գնողները սակաւաթիւ են. Եթէ գիրք տպագրելը մեզնում դեռ ևս մի բարեգործական բան է համարուած. քանի որ ազոր հետ կապուած է ընդհանրապէս նիւթական վնասը. եթէ գրիչը մեզնում դեռ ապրուստի միջոց չէ տալի գրագէտին. ազոր գլխաւոր պատճառներից մէկը համարում ենք երկու գրական լեզու ունենալը. Չլինէր այդ հանգամանքը. ամենայն հեշտութեամբ գրքերը Թիֆլիսից Վ. Պոլիս կը փոխադրուէին և կամ Վ. Պոլսից Թիֆլիս. այլ ևս խտրութիւն չէր գրուի այս կամ այն կողմում տըպագրուածի մէջ և շատ գրագէտներ դուցէ իրենց գրքերի երկրորդ. երրորդ և աւելի հրատարակութիւնները տեսնէին. Բայց որ գլխաւորն է. այդպիսով երկու կողմի հայերի մէջ մի մտաւոր մեծ շփում առաջ կը գար. Վանդ. առնենք փոքր ինչ այս կարևոր կէտի վրայ ևս.

Ազգութիւնը կազմուում է զանազան կեդրոնաձիգ ոյժերով միացած մարդկանց հոգևոր կապից. Արդ մեր ցրուած ու քաղաքականապէս բաժան բաժան եղած ազգի համար ոչ միայն մեզ իրար միա-

*) Այդպիսի վիճակագրական տեղեկագիր կարող է ամենայն հեշտութեամբ տալ Թիֆլիսի Կեդրոնական գրադատուոցը. երբ միայն այդպիսի բանի համար բարի կամ ունենայ:

ցընող շատ կեդրոնաձիգ ոյժեր են պակասում, որ ունին ուրիշ ազգերը, այլ ևս դժբախտաբար, շատ կեդրոնախոյս ոյժեր կան, որոնք մեր ազգութեան կապը քայքայում են։ Այդ պակասութիւնների մասին խօսելու տեղը չէ այս յօդուածի մէջ, բայց այսքանը միայն պէտք է շեշտել, որ այդպիսի բազմաթիւ կեդրոնախոյս ոյժերին դէմ դնող մի միութեան պատկանելու գիտակցութիւնն առաջ բերող ամենամեծ ոյժն արդի ժամանակներում, ազգային գրականութիւնն է՝ ոչ միայն մեզ համար, այլ և նոյն իսկ Նւրոպայի նշանաւոր ազգութիւնների համար։ Թէ որքան այդ ազգային գրականութեանը պարտական են արդի եւրոպական ազգերից շատերը, Իտալացիք, Գերմանացիք և ուրիշները, այդ յայտնի է։ Թէ որքան իրենց համար բարեբախտութիւն են համարում Գերմանացիք, որ ունեցել են մի գրականութիւն, որ ընդունելի և ընդհանուր է եղել թէ աւստրիացու և թէ պրուսացու, թէ բաւարացու և թէ միւս գերմանական բազմաթիւ ու բազմաբարբառ ցեղերի համար—այդ գիտենք։ Մի զբոսական լեզուն և մի գրականութիւնն է գլխաւորապէս եղել նրանց մէջ հոգեւոր հաղորդակցութիւնն ու հոգեւոր միութիւնը ստեղծողն ու զարգացնողը։ Իսկ հոգեւոր հաղորդակցութիւնը, որ գլխաւորապէս լեզուի միութեամբ է լինում, եթէ ամենայն բան չէ, ամենամեծ բանն է արդի ազգութիւնների համար, ճշմարիտ է, մենք ինչքան ցրուած լինինք և բաժան բաժան, դարձեալ ունինք մի մեծ ազգութեան պատկանելու գիտակցութիւնը, որ մեծ բան է անշուշտ, բայց կարող ենք արդեօք ասել թէ ունինք մի ընդհանուր ազգային գրականութիւն, այդ մեծ հոգեւոր ոյժը ազգութիւնների համար, Խօսքս այստեղ մեր գրականութեան աղքատ լինելու մասին չէ հարկաւ։ Մենք չունինք ինչպէս ոչ մի ընդհանուր գրական լեզու, այդպէս և ոչ մի ընդհանուր ազգային գրականութիւն, որ հաւասարապէս գրաւէր, ոգի և սիրտ ու միտք շնորհէր ամեն կողմերի հայերին։ Մենք ունինք միայն ռուսահայոց գրականութիւն ու լեզու և թիւրքահայոց զբոսականութիւն ու լեզու, եթէ դժբախտ քաղաքական հանգամանքները մեզ ռուսահայ ու թիւրքահայ են դարձրած, ինչո՞ւ մեր լեզուն ու գրականութիւնը նոյնպէս ռուսահայ ու թիւրքահայ պիտի դառնային։ Մեր լեզուն ու գրականութիւնն ի՞նչ կապ ունին ռուսի և թուրքի հետ։ Մենք մի հայ ազգ ենք և մի հայ գրականութիւն ու գրական լեզու պիտի ունենանք։ Իսկ եթէ չունենանք այդ, կը նշանակէ մեզ պակասում է արդի ժամանակների հոգեւոր միութեան համար ամենամեծ ոյժը, Մի ազգային գրականութիւնն է առաջ բերում ազգային գիտակցութիւնը, միութեան ինքնաճանաչութիւնը, Ազգը մէջ է հէնց եղել մի գրաբարի իրրւումի ընդհանուր գրական և եկեղեցական լեզուի՝ ա-

մենամեծ պատմական նշանակութիւնը մեր կենքի մէջ։

Այսպէս, խնդիրը որ կողմից որ վերցնելու լինենք, ոչ միայն կարելի չէ ասել թէ առայժմ մեզի անհրաժեշտ կարեւոր չէ մի գրական լեզու ունենալ, այլ, ընդհակառակն, անհրաժեշտ կարեւոր է և շատ ու շատ կարեւոր, Բայց զանք խնդրի ուրիշ կողմերին։

Գրական լեզուի միութեան անհրաժեշտութիւնը մի անգամ ընդունելուց յետոյ, առաջին ամենամեծ խնդիրն այն է անշուշտ թէ այժմեան ժամանակում արդեօք հնարաւոր է մեր երկու լեզուների միութիւնը և ի՞նչպէս կը լինի այդ։ Այս են այն դժուարակնձիւն հարցերը, որոնց պատասխանների առաջ ամենայն բարի կամք խորտակուում է։ Բայց նախ քան այդ դժուար խնդրի քննութեան մէջ մտնելը, տեսնենք թէ ի՞նչ է հասկացուում ընդհանուր լեզու, գաղափարով և ի՞նչպէս է կազմուում այդ ընդհանուր լեզուն։

Լեզուի ընդհանրութիւն ասելով՝ անշուշտ գրական լեզուի ընդհանրութիւնն ենք հասկանում։ Թէ չէ ամեն լեզուի մէջ ևս կան և խօսուում են բազմաթիւ բարբառներ, Գրական լեզու և խօսքի լեզու պէտք է տարբերել միմեանցից։ Գրական լեզուն թէպէտեւ հիմնուում է մի բարբառի վրայ, բայց երբէք կարելի չէ ասել թէ գրական լեզուն այս կամ այն բարբառն է։ Էապէս մօտ կարող է լինել մի բարբառի, բայց ժամանակի ընթացքում կրում է իր մէջ բազմաթիւ բարբառների ազդեցութիւն, օգտուում է անոնց բառերից ու քերականական ձևերից։ Այսպէս կազմուած են Նւրոպայի արդի ամեն մեծ գրական լեզուները, որոնց մէջ այս կամ այն բարբառը տիրապետող է միայն, բայց ոչ զուտ բարբառը գրական լեզու է դարձած, կամ գրական լեզուն զուտ մի բարբառ է։ Այսպէս կազմուած են և մեր աչքի առաջ արագընթացքով զեւ կազմուում են մեր երկու՝ արեւելեան և արեւմտեան գրական լեզուները։ Ով կարող է ասել թէ մեր արեւելեան գրական լեզուն ո՞ր բարբառն է։ Անոր մէջ իշխող է, ասում ենք, Արարատեան բարբառը, բայց ո՞րն է արարատեան բարբառը, ո՞ր քաղաքի, ո՞ր գիւղի լեզուն, և միթէ մեր արեւելեան գրական լեզուն Արարատեան բարբառն է։—Ոչ, Արարատեան բարբառն է, ոչ Արարադի, ոչ Թիֆլիսի կամ մի այլ տեղի։ Նաև իսկապէս զուտ արեւելեան բարբառն է (եթէ մեր ժողովրդական բարբառն երկու մեծ խմբի են բաժանուում՝ արեւելեան և արեւմտեան), այլ և արեւմտեան բարբառի, այլ և հին լեզուի՝ գրաբարի հետ խառն է։ Նոյն եղանակով կազմուած է և արեւմտեան գրական լեզուն, որ մի ժամանակ աւելի գրաբառ էր, քան որ և է ժողովրդական բարբառ։ Այդ գրական լեզուի մէջ ևս առանձնապէս իշխող չէ և ոչ մի բարբառ, ոչ Վանի, ոչ Մշու,

և ոչ իսկ Ա. Պոլսի կամ մի այլ տեղի, և ոչ իսկ գրաբառն է իշխող, և եթէ մի իշխող տարր կայ անոր մէջ, այդ ընդհանուր արևմտեան ժողովրդական բարբառներն են, ինչպէս և արևելեան գրական լեզուի մէջ՝ արևելեան ընդհանուր ժողովրդական բարբառներն են իշխող:

Ուրեմն մեր երկու գրական լեզուն ևս կադմուած են զանազան խառնուրդներից. ինչպէս մի մեծ գետի մէջ այս ու այն կողմից բազմաթիւ վերտակների ու առունների ջրերը վազում լցունում են, այդպէս և ամեն կողմից մեծ ու փոքր հոսանքներ են ընթանում դէպի մեր գրական լեզուների մէջ, Այս ի նկատի ունենալով՝ պահանջել որ մարդ ինչպէս խօսում է, այնպէս գրէ, կամ լաւ ևս, որ գրական լեզուն կենդանի խօսակցական լեզուի հետ նոյն լինի կարելի չէ. Հարկաւ, ինչքան մօտ լինի, այնքան լաւ. բայց կենդանի լեզուն միշտ մի որ և է բարբառի զօրաւոր ազդեցութեան տակ է, արդ՝ գրական լեզուն որ բարբառին պէտք է մօտ լինի, և միթէ ամեն բարբառի էլ կարող է այն հաւասարապէս մօտ լինել, Արևելեան մի և նոյն «գրական» լեզուով խօսող Արաբաղցին իսկոյն մատնում է իր Արաբաղցի լինելը, ինչպէս և Ալեքսանդրապոլցին իր Ալեքսանդրապոլցի լինելը, Ուրեմն ի՞նչ է եղրակացութիւնը—եթէ ոչ այն, որ կենդանի խօսակցական լեզուն, բարբառներն իրենց զարգացման առանձին ընթացքն ունին, իսկ գրական լեզուները՝ իրենց, Պահանջել որ գրական լեզուն կենդանի խօսքի իրական պատկերը լինի, այդ մի անիրագործելի ցնորք է, ազոր համար և այդ լեզուն «գրական» անունն է կրում, Արարացին ասում է. գնում ա, գնում ա, էթում ա, էթում ա, ևւն. Արաբաղցին քընում ա, ևւն ևւն, բայց գրական բարբառի մէջ գրում ենք՝ գնում ե. այսպէս և Թիֆլիսցին ասում է՝ գնում իմ, Արաբաղցին քընում ըմ, Արարացին էթում եմ, էթում եմ, նոյն բարբառի ճիւղերում գնում ամ կամ մի այլ ձևով, բայց գրական լեզուի մէջ գրում են միայն գնում եւ: Միթէ կարելի է այս ամեն ձևերն ևս գրական դարձնել, Անշուշտ ոչ, Գրական լեզուի առաջն ամեն մարդ իր մայրենի բարբառից մի որոշ չափով զիջում պիտի անէ, մէկն աւելի, միւսը պակաս, Թիֆլիսեցին պիտի թողնէ իր գնում իմ ձևը և ընդունի Արարատեան գնում եմ ձևը, իսկ Արարացին էլ իր կողմից պիտի թողնէ գնում ա ևւն ձևերը և ընդունի Թիֆլիսի գնում է ձևը, ինչպէս որ իրօք կատարուել է գրական լեզուի մէջ, Մենք միայն մի բայի մի ժամանակի երկու դէմքն իրրե օրինակ բերեցինք, բայց հաղարաւոր այդպիսի օրինակներ կարելի է բերել, որոնց մէջ հաւաստեալ կարելի է տեսնել թէ ինչպէս գրական լեզուն բարբառների փոխադարձ զիջումների վրայ է կազմուած:

Նւ երբ մի անգամ զիջումն իրրե սկզբունք ընդունում է մեր գրական լեզուի մէջ, այն ժամանակ, կարծում ենք, լեզուի միութեան խնդիրը, սկզբունքով հնարաւոր է դառնում. էականը այս է, իսկ թէ արևելեան հայերն առանձին իմն հակիրութիւն ցոյց կուտան Պոլսոյ լեզուին և կասեն. «դէն ձգիր այդ կըլլայ—մըլլայ լեզուն», չեմ հասկանում, իսկ Պոլսի հայերի համար ասում—լինումները՝ խորթ կը թուին—այդ երկրորդական խնդիր է, Միշտ և ամեն տեղ բարբառախօսներն իրար չեն հասկանայ և իրար կը ծագրեն և մի բարբառին վարժուածի համար միւս բարբառը խորթ կը թուի, Բայց այդ խորթութիւնը կամ անհասկանալիութիւնը մէկդի պէտք է դնել, այդ մեզ պէտք չէ վախեցնէ և ոչ յետ կասեցնէ և ոչ իսկ առաջնորդէ մեր լեզուների միութեան խնդրում, եթէ այդպիսի խորթութիւնը և անհասկանալիութիւնից վախենալու լինինք, պէտք է մեր երկու գրական լեզուից էլ հրաժարուենք, զի հաւատացէք ինքեւ ե ձեւը գրեթէ նոյնքան խորթ է արևելեան ընդմ ա, ընդմ ա, ընում ա, ըլելի ևւն. ձևերով խօսող հայերի որքան կըլլայ ձեւ, և վերջին ձև էլ գրեթէ նոյնքան խորթ է՝ արևմտեան կըլնի, կըլնի, կեղնի, կեղնայ ևւն. ձևերով խօսողների համար:

Եթէ այսքան բազմաթիւ ձևերն իրար փոխադարձաբար զիջել են, այդ զիջման ընթացքը պիտի շարունակուի լեզուի միութիւն առաջ բերելու համար:

Սկզբունքով փոխադարձ զիջումն լեզուի միութեան համար իրրե հիմունք ընդունելուց յետոյ, այժմ հարց է առաջանում թէ արդեօք այժմ, այժմեան հանգամանքների մէջ, հնարաւորութիւն կայ լեզուի միութիւն առաջ բերելու:

Թարգելի Ծաղկաբաղը, եթէ սխալ չենք հասկացել, առ այժմ անհար է համարում այդ միութիւնը, իսկ թէ յետոյ հնարաւոր է այդ և ի՞նչ կերպով—այդ ևս անյայտ է մնում, Ճշմարիտ է, կարելի չէ խնդիրն այնպէս դիւրին ըմբռնել թէ «յանկարծ այս կամ այն լրագրի կամ լրագիրներու յօդուածագիրները... այլագիր և այլաբարբառ» լինին, Մենք ոչ միայն տարակուսում ենք, այլ և բռնաւ չենք հաւատում այդպիսի յանկարծական բանի, Բայց և համաձայնել չենք կարող հետեւեալ խօսքերին. «Թոյլ տուէք, բարեկամ, որ երկու աշխարհաբարներն ալ ընթանան իրենց ընթացքը... և այդ ինչո՞ւ. 1) վասն զի բնութիւնը ոստում չի գիտեր, և 2) վասն զի լեզուի կազմութեան մէջ մարդկային արուեստը խորթութիւն է»:

Բացատրենք թէ ինչո՞ւ և ի՞նչ մարդով չենք համաձայնիլ այս մտքերին—Հարկաւ, բան չունինք ասելու այն հանրիմաստի դէմ թէ «բնութիւնը ոստում չգիտէ», բայց և լեզուի միութիւնն առաջ

բերելու համար մենք չենք ուզում, որ բնութիւնը ուսուցում անէ: Անշուշտ, եթէ ցանկանայինք զբարբր կենդանացնել, բնութեան մի ուսուցում կը լինէր այդ, և այն՝ յետոսուսում, որ անհնարին է: Իսկ եթէ կամենանք, որ մի մատենագիր նոյն իսկ զբական լեզուի մէջ գործածական երկու երեք ձեւերից մէկն ընտրէ: այդ ժամանակ բնութիւնը ոչ թէ ուսուցում է անում, այլ շարունակում է իր ընթացքն ընթանալ: Պարզեք օրինակով. «Հանդէսի» մէջ պատահաբար կարգում ենք 1897 թ. 8, 227-րդ երեսը. «տոտերու սեւակաց զարգացումը...» նոյն երեսին «զրկուած սեւակներու սկզբնական ձևերը...» Պարծեալ կարգում ենք նոյն երեսին. «բազմութիւն մեծագիւր... կը հաստատեն»... և դարձեալ. «ձեռագիրը... մեր առջև կը դրնեն»... Արդ, մեզ համար անհասկանալի է մընում, թէ ինչպէս բնութիւնը ուսուցում կանէր: եթէ նոյն հեղինակը մի և նոյն երեսին, միևնոյն բառը միևնոյն քերականական ձևի մէջ մի անգամ «տեսակաց» չգրէր, միւս անգամ «տեսակներու», մի անգամ «ձեռագիրը», միւս անգամ՝ «ձեռագիրներ»:

Բնութիւնը ուսուցում չի անում: Բայց բնութիւնն «ընտրութիւն» (selection) է անում ինչպէս կենդանի տեսակների, այնպէս և կենդանի լեզուի մէջ: Բայց բնութիւնը լեզուի մէջ «ընտրութիւն» անում է անշուշտ մարդու միջոցով: Ամեն լեզուական փոփոխութիւն սկսւում է անշուշտ անհատից և ապա անցնում է ուրիշներին և ընդհանրանում, եթէ անհատի սկսած փոփոխութիւնը իր մէջ կենդանի սաղմ է կրում և կամ հանգամանքները նըպաստաւոր են իրեն. կամ թէ, հակառակ դէպքում, շուտով շատ անգամ նոյն իսկ սկսող անհատի հետ մեռնում է: Այդ լեզուական «ընտրութիւն» անհատի միջոցով կամ անգիտակցական է լինում, կամ գիտակցական: Արդ, եթէ մեր պապերը անգիտակցաբար թէ գիտակցաբար սկսել են «տեսակաց» ձևի փոխանակ «տեսակներու» կամ «տեսակների» ձևը գործածել, մի թէ մենք բնութեանը ուսուցում անել տուած կը լինինք կամ լեզուի կազմութեան մէջ խորթութիւն մտցրած կը լինենք, եթէ գիտակցաբար տեսակների կամ տեսակներու գրելը միշտ և ոչ մի անգամ տեսակաց, միւս անգամ տեսակներու կամ տեսակների: Ինչո՞ւ բնութեան մէջ խորթութիւն և ուսուցում չեն մտցնում: Երբ մարդիկ անոր կատարած «ընտրութեամբ» կենդանիների և բոյսերի տեսակները աշնուացնում ու բազմացնում են, Բայց ի՞նչ ենք կենդանիներին ու բոյսերին դիմում. եթէ բնութեան մէջ, լեզուի մէջ ուսուցում ու խորթութիւն է բերում մարդկային արուեստը, էլ այնուհետեւ աւելորդ են ամեն քերականութիւն ու կանոններ, իզուր էր և. Այստեան իր «Բնական քերականութիւն» գրում և զբարառն «Եւ հարաբերական համար յայնպիսի կանոններ աւանդում, որ քիչ շատ այսօր ամեն գրողներու գրելին ուղղութիւն կու տան»:

Երբեք, ուրեմն, «մարդկային արուեստը» լեզուի մէջ, այսինքն գիտակցական ազդեցութիւնը լեզուի վրայ, իբրեւ լեզուի մէջ խորթութիւն բերող, չափազանցութիւն է: Արդի ոչ մի եւրոպական լեզու կարելի չէ ցոյց տալ, որի վրայ մարդկային արուեստը բանած չլինի: Բայց ի հարկ է ամենայն մարդկային արուեստ յաջող չէ և ամենայն արուեստ էլ չի անցնում լեզուի մէջ: Խնդիրն այն է, ուրեմն, թէ ո՞ր չափով և ո՞րպիսի ձևով արուեստ պիտի գործ դնել լեզուի մէջ, որ չհակասի բնութեանը և ասոր հետ երթայ: Այդ արուեստը լեզուի վրայ գործ դնելուց առաջ պէտք է միայն ուսումնասիրել լեզուի բնութիւնը, անոր զարգացման ընթացքը, խորը թափանցել լեզուի ոգու մէջ և ըստ ոյն՝ արուեստը բանեցնել: Այդպիսի արուեստն էլ միայն իրաւունք ունի արուեստ կոչուելու:

Բայց թէ նոյն իսկ յարգելի Ծաղկաբաղն այս արուեստն ընդունում է լեզուի համար, այդ պարզ երևում է մեր յօդուածին առիթ տուող հատուածի ներքեւում գրած հատուածից՝ «նորոսոյց հին կանոններ» վերնագրի տակ, որի մէջ խնդիրը և և որ որոշեալ յօդի գործածութեան համար է: այսինքն թէ երբ պէտք է և գրել և երբ ոչ: Յօդուածագիրը կառավարի, գրում է Ծաղկաբաղը, որ ուի և-ի, հ-ի, յ-ի առջև չափհաս այս կանոնը (և գրելը). իսկ մենք կատարակեմք որ ամեն ձայնաւորի առջև անխորք և հ-ի և յ-ի առջև իբրեւ կէս ձայնաւոր գրերու առջև պահուի... թէ այս երկու առաջարկութիւնից որն է մեր կարծիքով, մեր լեզուի զարգացման ընթացքին համեմատ—այդ մասին յետոյ, բայց թէ այս առաջարկութիւնները ցոյց են տալիս, որ լեզուի զարգացումն ուսումնասիրելով կարելի է գրական լեզուն արուեստի ենթարկել, այդ ակնյայտի է:

Ինչպէս պէտք է անել այդ «արուեստաւոր գիտակցական ընտրութիւնը», այսինքն մեր երկու լեզուի բազմութիւն ձևերից որն առնել և որը ձգել, որ միութիւն առաջ գայ, և ո՞վ պիտի սկսէ այդ գործը:

Ահա մնացած երկու հարցը, որոնց քննութեան մէջ պէտք է մտնել: Այդ հարցերից վերջինիս պատասխանելը հեշտ է և մենք վերջինից կըսկըսենք:

Կարծում ենք, որ ամենայն գրող, որ լեզուի միութեան կարևորութիւնն զգում է, իրաւունք ունի և նոյն իսկ ոչ թէ իրաւունք ունի, այլ պարտիք ունի երկու գրական լեզուի միութեան մասին հոգալու: Նա պէտք է աշխատի գոնէ այնպէս գրել, որ երկու կողմի ընթերցողների համար ևս հասկա-

նալի լինի իր գրածը, Աւստի մենք այսպէս դատելով սխալ ենք համարում յարգելի Ծաղկաքաղի այն կարծիքը թէ լեզուի միութեան նկատմամբ «Հանդէս Ամսօրեայի» «Բաղմամբէպի» կամ որ եւ լրագրի հեղինակութիւնը զերոյ է, Ինչպէս ամեն բանի նշնպէս եւ լեզուի մէջ նոյն անհատի նշանակութիւնն անգամ զերոյ չէ, ո՛ր մնաց մի լրագրի որի մէջ հաւաքական ոյժեր են գործում, Գաղափարը ծնւում է սկզբում անհատի մտքում եւ ապա անցնում է ուրիշներին, եւ երբ ընդհանուրն ընդունելի է դառնում, նոր սկսում է մարմնանալ, Այսպէս եւ մեր երկու գրական լեզուի գաղափարը, թէպէտ եւ նոր չէ, բայց դեռ այն աստիճանի վրայ է, որ անհատների ուղեղում միայն գոյութիւն ունի, եւ այդ անհատներն էլ դժբախտաբար կամ սխալ են ըմբռնում միութեան խնդիրը, ցանկանալով, որ գրաբար կենդանանայ, կամ թէ նոյն իսկ վախենում են թէ մի գուցէ լեզուների միութեան մասին կարծիքներ յայտնելով ծիծաղելի դառնան քանի որ վստահ են իրենց հեղինակութեան վրայ, Բայց թող հաւատացած լինին այդպիսիները, որ ծիծաղելի ոչինչ չկայ այս խնդրի մէջ, Եթէ այդպէս դատելու լինէին, ոչ Արովմանը իր «Աւերք Հայաստանին» ժողովրդի լեզուով պիտի գրէր, ոչ «Իւսիսափայլն» աշխարհաբար լեզուով պիտի հրատարակէր, Նազարեանը, եւ ոչ մենք այժմ արեւելեան գրական լեզու պիտի ունենայինք, Չէ՞ որ Արովմանն եւս իւր լեզուի համար ծաղրի էր ենթարկւում, բայց նա չվախեցաւ իր ծիծաղելի դառնալուց, թէ իւր գրաբար չգիտէ կամ տգէտ է, Նա մի անգամ որ համոզուած էր թէ ժողովրդին ժողովրդի լեզուով պէտք է խօսել, հաստատ մնաց իր այդ համոզմունքին, եւ ապագան ցոյց տուաւ, որ իրաւունք ունէր, Այսպէս եւ եթէ կան անհատներ, որոնք համոզուած են թէ լեզուների միութիւնն անհրաժեշտ է, նրանք բացարձակ պիտի քարոզեն, այդ մինչեւ գաղափարն ընդհանրանայ, եւ ապա թող հաւատացած լինին թէ մի որ կը մարմնանայ այդ բայց պէտք չէ կարծել թէ կարճ ժամանակում, մի տարում, երկու տարում կը կատարուի այդ, եւ ոչ իսկ տասնաւոր տարիների գործ է այդ, Ըստ երեւութին անհատի եւ նոյն իսկ մի լրագրի, «Հանդէսի» կամ ուրիշի հեղինակութիւնը զերոյ է այս խնդրում, բայց այդ այն ժամանակ միայն, եթէ ուղենք, որ անհատի կամ լրագրի հեղինակութիւնը կարճ ժամանակում ընդունելի դառնայ ամենքի համար եւ մի քանի տարուան ընթացքում լեզուների միութիւնը գլուխ գայ, Բայց այդպէս դատել կարելի չէ, Եթէ այդպէս դատելու լինէր Միխիթար արքան, այդ մեծ մարդը այժմ մենք ոչ Միխիթարեան միաբանութիւններն ունեցած կը լինէինք եւ ոչ նրանց գործունէութիւնը, որին պարտական ենք գրել թէ մեր ամբողջ հին գրական

նութեան վերածնութիւնը եւ ուրիշ շատ բան, Սակայն Միխիթարի հեղինակութիւնն սկզբում զերոյ էր եւ նոյն իսկ ծիծաղելի ու հալածական էր նա, բայց հեղինակութիւնը հետզհետէ զօրացաւ, նրա գաղափարը մարմնացաւ եւ բերեց իւր արդիւնքը, եւ հին գրքերի ու լեզուի վերածնութիւնն այն տեղն իսկ հասաւ, որ քիչ էր մնացել, որ գրաբարը վերականգնանար եւ նորից ընդհանուր գրական լեզու դառնար, եւ եթէ այդ չեղաւ, որովհետեւ բնութեան ընթացքը յեղաշրջել կարելի չէ, բայց եւ այնպէս այդ վերածնած գրաբարը իր բառերով ու ոճերով, իր մի քանի քերականական ձեւերով անանցումներով ու բարդութիւններով, այնպէս կենդանացաւ աշխարհաբարի մէջ, որ մենք այլ եւս գրաբար չենք համարում:

Այսպէս պիտի դատենք եւ այժմ լեզուների միութեան խնդրում, սկզբում «Հանդէսի» կամ մի ուրիշ լրագրի հեղինակութիւնը չնչին կը լինի, բայց հաւատացած պիտի լինել, որ այդ հեղինակութիւնը, եթէ յենուած է իսկական կարիքի վրայ, եւ եթէ սխալ ըմբռնում չունի, մի օր անպատճառ կը զօրանայ, Օրինակ եթէ «Հանդէսն» ըլլաւ բայի տեղ լինել սկսէ գործ անել, սկզբում գուցէ շատ հետեւողներ չունենայ, բայց տարիներ կանցնեն եւ մէկ օր կը տեսնենք, որ լինել ձեն ընդհանուր ընդունելի է դարձած արեւմտեան գրական լեզուի մէջ, եւ ոչ որ չգիտէ թէ որտեղից եւ ինչպէս առաջացաւ այդ փոփոխութիւնը, Այսպէս ո՞վ կարող է ասել թէ ո՞վ սկսեց արեւմտեան գրական լեզուի մէջ ցաղի, ցաղիք եւ այլն գրել, որ այժմ ընդհանուր գործածական է, բայց միթէ շատ հեռու է այն ժամանակը, երբ ընդհանուր գործածական էր ցաղի, ցաղիք ձեւը, եւ կամ ինչպէս եղաւ, որ արեւելեան բարբառի մէջ էս, էդ, էն ձեւերին այս, այդ, այն ձեւերը փոխանակեցին, իսկ արեւմտեան լեզուի մէջ էլ վերջին ձեւերն սկսել են աս, ադ, ան ձեւերին փոխանակել, Ա՛ւր են ասանկ, տաանկ, անանկ բառերը եւ շատերը, Անշուշտ այդ ամենը սկսուած է հեղինակութիւն չունեցող անհատների ձեռքով, եւ մինչեւ այժմ շատ լեզուական ձեւեր այսպէս անդալի կերպով միացած կը լինէին երկու լեզուի մէջ, եթէ երկու կողմի հայերն այնպէս կտրուած չլինէին իրարուց, ինչպէս էին մինչեւ վերջերս, թէպէտ եւս այժմ եւս գոհ չպիտի լինենք այն շփումից, որ կայ արեւելեան եւ արեւմտեան հայերի մէջ:

Բայց մեզ թերեւս առարկեն թէ ամեն գրողի իրաւունք տալով լեզուների միութեան վրայ հոգալու, մենք այդպիսով լեզուները, փոխանակ միացնելու, իրարուց հեռանալու վտանգին ենթարկած կը լինինք, զի ամեն մարդ կրնայ իւր քմահաճոյքը բանեցնել, մէկն այս ձեւը կը նորէ, միւսն այն որով եւ լեզուի միութիւն գլուխ չի գալ, Մենք այդ վախը չունինք, Ճշմարիտ է, քմահաճոյքներ

կը լինին մէջտեղում: Բայց քմահաճոյքներն առանց հետեւողի կը մնան. իսկ միայն այն «ընտրութիւնները» կը մնան մէջտեղում և կընդհանրանան, որոնք կամ լեզուի զարգացման ընթացքին համեմատ են, կամ մի որ և է պատմական հանգամանքի ազդեցութեան տակ, աւելի ոյժ ունին ընդհանրանալու համար: Օրինակ, դիցուք որ և է մէկը ցանկացաւ արեւմտեան լեզուի լլալ բայը մտցնել արեւելեան լեզուի մէջ և գրել լլալ և, որպիսի ձև հէնց կայ բարբառների մէջ, բայց այդ կը մնայ առանց հետեւողների, քանի որ մեր սովորական լեզուի զարգացման համեմատ չէ. իսկ ընդհանրապէս և թէ արեւմտեան լեզուի մէջ մէկն սկսէ գրել լլալ-ի փոխանակ լինել, ինչպէս և հէնց վերջերս սկսել են շատերը գրել, մեծ հաւանականութիւն կայ, որ լինել բայն ընդհանրանայ արեւմտեան լեզուի մէջ, քանի որ լինել ձևն իրեն թիկունք ունի գրաբան ձևը, իսկ բառերի ընտրութեան մէջ երկու աշխարհաբառ գրական լեզուներն ևս գրաբառի ազդեցութեան տակ են:

Այստեղ մենք անցնում ենք արդէն և վերջին հարցին. թէ ինչպէս պէտք է անել այդ «արեւմտաւոր գիտակցական ընտրութիւնը», այսինքն երկու գրական լեզուի բազմաթիւ ձևերից որը պէտք է առնել և որը ձգել, որպէսզի լեզուի միութիւն գլուխ գայ: Այս հարցի պատասխանը որը ամբողջ խնդրի մէջ ամենից էականն է, և ամենից գոնաւորն է: Այստեղ յարգելի Ծաղկաբաղն իրաւունք ունի, երբ ասում է թէ առայժմ մեզ պէտք են հայերէնի ուսումնասիրութիւն, քննադատական գրուածքներ, բայց այդ ուսումնասիրութիւնն ու քննադատական գրուածքները, եթէ լեզուի միութեան համար պէտք է լինին, կարծում ենք երկու գլխաւոր բան պիտի պարզեն մեզ համար.

1. Հայոց ամբողջական լեզուն արեւելեան և արեւմտեան գրական լեզուն և ժողովրդական բարբառները մանաւանդ, իր զարգացման ընթացքի մէջ ընդհանրապէս ինչպիսի ձգտում ունի. այդ ընթացքը դէպի ուր է ուղղած, ուրիշ խօսքով, Հայոց բովանդակ լեզուի մէջ որ ձևերն սկսել են արդէն փոփոխութեան ենթարկուել, ինչ նոր ձևեր են բռնում՝ հնրի տեղ, որոնք վերջի վերջոյ դուրս պէտք է ընկնեն լեզուի միջից:

2. Ուսումնասիրել թէ ինչպէս է կատարուել երկու գրական լեզուի իրար մերձեցումն իրենց սկզբից մինչև այժմ: Ղի այդ մերձեցումն իրօք գոյութիւն ունի և կատարուում է այժմ, թէպէտև մեզ համար զգալի չէ:

Եթէ այս երկու հարցի պատասխանը ճշտութեամբ տրուի, այն ժամանակ մենք մի ընդհանուր, թէև ոչ անսխալական, առաջնորդ կունենանք երկու լեզուն եթէ ոչ միացնելու, գոնէ մօտեցնելու համար: Սպասենք այդպիսի ուսումնասիրութեան

և քննադատական գրուածքի իսկ մինչ այդ՝ մանր աշխատանքներով քանակ մեր լեզուներն իրար մօտեցնելու գործը շարունակել:

Մենք գրում ենք իրար մօտեցնելու և ոչ միացնելու գործը, զի այնքան միամիտ չենք, որ կարծենք թէ կարելի է այժմ, առանց որ և է քաղաքական մեծ փոփոխութեան կամ մի ուրիշ նշանաւոր հանգամանքի, երկու գրական լեզուն, որոնք իրենց թէպէտև փոքրիկ, բայց որոշ պատմութիւնն ունին, ի մի ձուլել և անոնցէ մի կատարեալ միութիւն կազմել: Եթէ այս անել չենք կարող առայժմ, գոնէ երկու կողմի համար հասկանալի դարձնելու չափ մօտեցնել կարող ենք երկու լեզուները, ուստի և, կարծում ենք, պէտք է լեզուների միացման խնդրի մէջ անփոյթ մնանք, կամ մեզ բախտաւոր համարենք, ասելով թէ «ընտրութիւնն օգտած է հայ գրականութեան այս պարգևներով, և թոյլ տան, որ այս երկու գրական լեզուն շարունակեն իրենց ընթացքը: Արդարև, բնութիւնն ընդարձակ մտքով առած, ումեն ինչ բնութեան մէջ է կատարուում, բայց եթէ մարդուս գիտակցական գործը սովորաբար բնութիւնից դուրս ենք հանում, այն ժամանակ կասենք, որ բնութիւնը չէ օգտած մեր գրականութիւնն երկու գրական լեզուով, բնութիւնը մեզ միայն բազմաթիւ բառաւորներ է տուած, իսկ որ մենք երկու գրական լեզու ունինք՝ այդ յատկապէս արեւելեան հայոց անցեալ գրագէտների անհեռատեսութեան շնորհիւ է: Մեր արեւելեան գրական լեզուն արդի ձևով իսկապէս գոյութիւն պիտի չունենար, եթէ նախաճառն, նազարեան, Պատկանեան և ուրիշները, որոնք սկիզբն գրին այդ գրական լեզուին, աւելի ծանր մտածած լինէին իրենց գործի վրայ և հայութիւնը Ռուսիայի սահմաններից դուրս ևս տեսնէին:

(Կը շարունակուի):

Մ. Արեղեան

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՒՆՉ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԵՏԵՔ ԵՎ ԳԻՄՆԵՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ
ԿԱԿԱԶՆԵԼՈՒ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Պակազութեան վերաբերեալ խնդիրները ներկայումս այնքան մշակուած են մասնագէտների կողմից, որ հնարաւոր է յաջողութեամբ կուրել նորա դէմ: Դպրոցների բարոյական պար-